
**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՆՉՓՈՐՁԱՅԻՆ
ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՍՏԵՓԱՆՅԱՆ Հ. Մ.

Իրավունքի էությանը կարող ենք հասու լինել ոչ թե մակաձման, այսինքն՝ բազմաթիվ իրավական երևույթների մեջ նրանց ընդհանուր հատկանիշները հայտնաբերելու, այլ իդեացիայի միջոցով, որը ֆենոմենոլոգիական տեսակետից ներըմբոնողականության առանձնահատուկ տեսակ է՝ էյդետիկ ներըմբոնողականություն: Նշենք նաև, որ էությունների հայեցողության հիմնական եղանակը երկվակայության մեջ տվյալ եզակիության ազատ զանազանակերպումն է, որի հիմքն է տվյալ եզակի երևույթը:

Իրավունքի էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է վերցնել իրավական աշխարհի որևէ երևույթ, ասենք, որևէ երկրի դրական իրավունքը, և ազատ զանազանակերպման միջոցով բացահայտել այն էական հատկանիշները, առանց որոնց այդ եզակի երևույթը գոյություն չի կարող ունենալ: Հայտնաբերված անփոփոխ հատկանիշների ամբողջությունը հենց կկազմի իրավունքի էությունը: Իրավունքի էության բացահայտման այսպիսի եղանակը կարող է տպավորություն թողնել, թե իրավունքի էության հայեցողությունն անտեսում է եզակիության, տվյալ դեպքում՝ որևէ երկրի դրական իրավունքի անհատական գոյությունը, դրանով իսկ խզում է գիտակցության կապն իրավունքի աշխարհի եզակիության հետ և ստվեր է գցում երևույթի գոյության վրա: Սակայն նման տպավորությունը կարող է երևույթների էության հայեցողության վերաբերյալ թյուր պատկերացումների արդյունք լինել: Ֆենոմենոլոգիայում առանձնացնում են անհատական իրերի էությունը, այն իրերի, որոնք շրջապատում են մեզ և քննվում այս կամ այն տեսանկյունից: Այդպիսի էությունները համարվում են էյդոսներ (գաղափարներ): Եզակի իրերի էյդոսները մոտավոր էություններ են, որոնք իդեալականացման հետևանքով կարող են վերածվել ճշգրիտ, իդեալական էությունների, այսպես կոչված, կատարելատիպերի, որոնց կարող է ձգտել եզակի իրը և երբեք չհասնել: Թե՛ էություններ-էյդոսները, թե՛ էություններ-կատարելատիպերն իդեալականություններ են, սակայն երկրորդներն ածանցված են առաջիններից: Այդ իմաստով երևույթների էության հայեցողության դեպքում գիտակցությունը չի կտրվում եզակիությունից, և վերջինիս անհատական գոյությունը չի անտեսվում:

Իրավունքը, ինչպես և ցանկացած այլ երևույթ, ունի հատկանիշների երկու խումբ, որոնցից մեկն էական, պարտադիր հատկանիշների խումբն է, իսկ մյուսը՝ երկրորդական, ոչ պարտադիրների: Տվյալ դեպքում մեր խնդիրը որևէ իրավական երևույթի՝ որպես նմուշի օգտագործմամբ և զանազանակերպմամբ իրավունքի էական և երկրորդական հատկանիշների գատումն է, որը հնարավորություն կտա բացահայտելու իրավունքի էությունը: Ցանկացած իրավական իրողություն, որպես

եզակիություն, օժտված է բազմազան և բազմապիսի հատկանիշներով: Դրական իրավունքի հատկանիշների բազմազանությունը իրավունքի ընդհանուր տեսության մեջ իրավունքի բազմաթիվ բնորոշումների առկայության պատճառներից մեկն է: Հետազոտողներից յուրաքանչյուրն իրավունքի հատկանիշներից մեկը կամ հատկանիշների խումբը կամայականորեն համարում է պարտադիր և էական և, այդպիսիք հիմք ընդունելով, ձևակերպում է իրավունքի սեփական բնորոշումը:

Գիտակցության դաշտում դրական իրավունքի համակարգի զանազանակերպման ընթացքում մեր առաջ նախ հառնում են վարքագծի տարբեր կանոններ, ինչպես նաև զանազան ինստիտուտների ու կազմակերպությունների գործունեության սկզբունքներ, այսինքն բազմապիսի իրավական նորմեր: Այդ նորմերի մի մասը պարտավորեցնող են, նախատեսում են որոշակի ակտիվ գործողություն կատարելու պարտավորություն: Սակայն, ակնհայտ է, որ այդ պարտավորությունը համահարաբերակցված է որոշակի անձի (ինստիտուտի, կազմակերպության) իրավունքի հետ, որի համաձայն՝ տվյալ անձը (ինստիտուտը, կազմակերպությունը) իրավունք ունի պահանջելու պարտավորության պատշաճ կատարումը: Փաստորեն, իրավական նորմերի այս տեսակում իրավունքը ներհատկական է, և նրա բովանդակությունը բացազատվում է պարտականության միջոցով: Իրավական նորմերի մյուս մասն արգելքներ են, որոնք անձանց (ինստիտուտներին, կազմակերպություններին) պարտավորեցնում են ձեռնպահ մնալ որոշակի գործողություններ կատարելուց: Այստեղ էլ այդ արգելքները համահարաբերակցված են որոշակի անձանց (ինստիտուտների, կազմակերպությունների) իրավունքին: Սակայն արգելքները թեպետ համահարաբերակցված են համապատասխան իրավունքներին, այս դեպքում չեն խաթարում իրավունքի ներհատկականությունը. վերջինիս բովանդակությունը չի բացահայտվում արգելքների միջոցով: Եվ, վերջապես, կան իրավական նորմեր, որոնք որոշակի անձանց (ինստիտուտների, կազմակերպությունների) լիազորում են որոշակի ակտիվ գործողություններ կատարել: Այդ լիազորությունները համահարաբերակցված են այլ անձանց (ինստիտուտների, կազմակերպությունների) պարտավորությունների հետ՝ ձեռնպահ մնալ որոշակի գործողություններ կատարելուց կամ լիազորված անձի օգտին կատարել որոշակի գործողություններ:

Նշված բազմազան նորմերի վերաբերյալ առաջին տպավորությունն ի մի բերելով՝ տեսնում ենք, որ դրական իրավունքի համակարգում կան իրավունքներ և դրանց համահարաբերակցված պարտականություններ, իրավատերեր ու պարտատերեր, վերջին հաշվով՝ իրավատիրություն և պարտատիրություն, որոնք կարող ենք դրական իրավունքի հատկանիշներ համարել: Հիշտ է, դրական իրավունքի համակարգում կան նաև իրավական նորմեր, որոնք հռչակում են որոշակի դրույթներ, բնորոշում են որոշակի իրավական երևույթներ, ամրապնդում են որոշակի սկզբունքներ, սահմանում են այլ իրավական նորմերի գործողության մեջ մտնելու կամ դրանց գործողությունը դադարեցնելու ժամկետներն ու կարգը, սակայն այդ բոլոր նորմերը օժանդակ բնույթ ունեն, գործում են վարքագծի կանոն կամ գործունեության սկզբունք սահմանող նորմերի հետ համատեղ:

Իրավատիրությունը և պարտատիրությունը միշտ համահարաբերակցված են, ցանկացած իրավական կապ իրավատիրական-պարտատիրական է, իրավատիրության առկայությունը ենթադրում է նաև պարտատիրություն և ընդհակառակը: Այժմ դրական իրավունքի համակարգից վերացնենք իրավատիրական-պարտատիրական բոլոր կապերը և տեսնենք, թե դրական իրավունքի համակարգը կպահպանի՞ ինքնանույնականությունը: Պատասխանը միարժեք է՝ ոչ: Եթե չկան իրավատեր, իրավատիրություն, չկա պարտատիրություն, չկա նաև իրավունքի համակարգ: Իրավատիրությունը և դրա համահարաբերական պարտատիրությունն իրավունքի էությունը բնութագրող և պարտադիր հատկանիշներ են:

Գիտակցության դաշտում դրական իրավունքի համակարգի հետագա զանազանակերպումը բերում է այն համոզման, որ իրավատիրական-պարտատիրական կապերը, ինչպես նաև դրական իրավունքի ամբողջ համակարգը հիմնվում են որոշակի սկզբունքների վրա: Նախ, կարող ենք համոզվել, որ դրական իրավունքի համակարգը, չնայած առանձին փոփոխություններին, որոնք ժամանակ առ ժամանակ կատարվում են, ընդհանուր առմամբ մնում է անփոփոխ: Ի՞նչ կլինեք, եթե դրական իրավունքի համակարգն ամբողջապես փոփոխվեր և փոփոխվեր պարբերաբար: Այդ դեպքում կփոփոխվեին նաև իրավատիրության և պարտատիրության բովանդակությունը, շրջանակները, միևնույն վեճը կլուծվեր տարբեր կերպ: Իսկ դա անարդար կլինեք: Բացի այդ, տեսնում ենք, որ դրական իրավունքի համակարգի պահանջները տվյալ դեպքում տարածվում են բոլոր քաղաքացիների վրա. բացառություններն արդարացված են և տեղին: Եթե հակառակը լինեք, դրական իրավունքի ամբողջ համակարգն անարդար կլինեք: Դրական իրավունքի հետագա զանազանակերպումը ցույց է տալիս, որ ամեն իրավախախտում համապատասխան հակազդեցություն է առաջացնում: Իրավախախտման հետևանքները կամ վերացվում են, և վերականգնվում է իրերի նախկին վիճակը, կամ էլ իրավախախտում կատարած կողմը համապատասխան պատիժ է ստանում: Բացի այդ, գոյություն ունի իրավախախտումների քննարկման հատուկ կարգ, որտեղ տուժող կողմը և իրավախախտում կատարած անձը հավասար իրավունքներ ունեն: Այս դիտարկումներն ի մի բերելով՝ կարող ենք ասել, որ դրական իրավունքի համակարգը հիմնված է երկու գլխավոր հավասարության և կատարած արարքին համապատասխան խրախուսանք կամ պատիժ ստանալու սկզբունքների վրա: Այդ երկու սկզբունքները կազմում են այնպիսի երևույթի բովանդակությունը, ինչպիսին արդարությունն է: Եթե ուշադիր դիտարկենք դրական իրավունքի համակարգը, կարող ենք տեսնել, որ այն ամբողջապես ներծծված է արդարությամբ: Հարց է ծագում՝ արդարությունն իրավունքի էությունը բնորոշող պարտադիր, թե՞ իրավունքի էությանն ընդամենը առնչվող երկրորդական հատկանիշ է: Կարելի է ենթադրել դրական իրավունքի այնպիսի համակարգ, որը չմարմնավորի արդարության սկզբունքը: Առաջին հայացքից թվում է՝ այո: Օրինակ, կարելի է պատկերացնել իրավական համակարգ, որտեղ քրեական պատասխանատվության է ենթարկվում տուժողը և ոչ թե հանցագործը: Արդյո՞ք այդպիսի սկզբունքի վրա հիմնված քրեական իրավունքի համակարգը կարելի է արդարացի համարել: Մեր

տեսակետից, իհարկե՝ ոչ: Բայց ենթադրենք, որ նման քրեական իրավունքի համակարգ, այնուամենայնիվ, գոյություն ունի, և այդ իրավունքի համակարգի գործողության ու կոնկրետ հանցագործության առկայության պայմաններում տուժողին չեն պատժում կամ պատժում են հանցագործություն կատարած անձին: Բնական է, որ նման փաստն անարդարացի կհամարվի: Այսինքն, երևակայական, մեր տեսակետից՝ հրեշավոր այս քրեական իրավունքը նույնպես հիմնված է արդարության, բայց որոշակի կերպով պատկերացված արդարության սկզբունքի վրա: Բանն այն է, որ արդարությունը կարելի է տարբեր կերպ մեկնաբանել: Օրինակ, արդարացի կարելի է համարել կյանքի կարգավորման այնպիսի սկզբունքը, որը հիմնված է պետության, հասարակության կամ անհատի շահերի վրա: Այդ դեպքում արդարացի կհամարվի այն իրավական համակարգը, որը չի հակասում պետության, հասարակության կամ անհատի շահերին: Այդ սկզբունքներից որևէ մեկի վրա հիմնված դրական իրավունքի համակարգը մեկ այլ սկզբունքի վրա հիմնված դրական իրավունքի տեսանկյունից կհամարվի անարդարացի, «ոչ իրավական», բայց անժխտելի է, որ դրական իրավունքի նշված երեք համակարգերն էլ հիմնված են յուրովի մեկնաբանված արդարության սկզբունքի վրա: Ի դեպ, իրավունքի պատմությունից հայտնի է, որ հասարակության շահը՝ որպես արդարության չափանիշ համարվող իրավական համակարգերում գործել է, այսպես կոչված, «քավության նոխազի» ինստիտուտը: Վերջինիս էությունն այն է, որ հասարակության որևէ անդամ մյուսների մեղքերը քավելու համար զոհաբերվում է: Այդ ինստիտուտը գործել է Հին Հռոմում, Հին Հունաստանում և այլ երկրներում¹:

Շարունակենք մեր մտափորձը և աշխատենք պատկերացնել դրական իրավունքի այնպիսի համակարգ, որը բնութագրվի բռնությամբ, անմարդկայնությամբ, արդարության սկզբունքի լիակատար բացակայությամբ: Դժվար է այդպիսի իրավական համակարգ պատկերացնելը, թեև կարող ենք դիմել այլ մարդկանց երևակայության պտուղ հանդիսացող իրավունքի համակարգերին, ասենք, օրինակ, Պլատոնի մտքի ուժով ստեղծված իրավական համակարգին: Պլատոնն իր իդեալական պետության կազմակերպման հիմքում դրել է աշխատանքի բաժանումը: Հասարակության համար անհրաժեշտ աշխատանքների տեսակները բաշխված են հասարակության տարբեր դասերի միջև: Իդեալական պետության մեջ ստորին դասը կազմված է այն մարդկանցից, ովքեր արտադրում են պետության համար անհրաժեշտ իրեր և մթերք, ինչպես նաև նրանցից, ովքեր նպաստում են արտադրությանը: Նրանցից վեր է կանգնած ռազմիկների դասը: Պետության մեջ երրորդ՝ բարձրագույն դասը տիրակալների (փիլիսոփաների) դասն է: Այս դասերը միմյանցից տարբերվում են բարոյական հատկանիշներով, տնտեսական դասին պատկանող մարդիկ բարոյական հատկանիշներով զիջում են ռազմիկների դասին, առավել ևս տիրակալների դասին պատկանող մարդկանց, այնուամենայնիվ, բոլոր երեք դասերը հավասարապես անհրաժեշտ են պետությանը: Սակայն այս կամ այն դասից սերվելն անհրաժեշտաբար կապված չէ բարոյական հատկանիշների և առաքինությունների հետ, այսինքն՝ տնտեսական դասից սերվողը կարող է

¹ Фрэзер Дж. Дж., *Золотая ветвь*, М., 1980, с. 642.

ունենալ ռազմիկներին կամ տիրակալներին բնորոշ հատկանիշներ և ընդհակառակը: Ծնվելուց և համապատասխան դաստիարակություն ստանալուց հետո յուրաքանչյուրն իր տեղն է գտնում նշված դասերից որևէ մեկում: Պլատոնն այս դասերը հստակ սահմանագատում է միմյանցից: Տիրակալների դասը, որն ընդունակ է հայեցողության միջոցով հասու լինել բացարձակ գաղափարների աշխարհին, կոչված է միայն կառավարելու, ինչպես հովիվը՝ հոտին: Ռազմիկները կատարում են հավատարիմ շան դեր, որոնք օգնում են հովիվներին՝ կառավարիչներին՝ տնտեսական գործունեությամբ զբաղվող «հոտը» կառավարելու համար:

Ռազմիկների դասն անադարտ պահելու համար սահմանված են խիստ օրենքներ: Նրանք պետք է տնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց բնակավայրերից հեռու բնակվեն: Ռազմիկները զրկված են սեփականության իրավունքից և կին-ռազմիկների հետ կազմում են ամբողջական միություն, որտեղ բոլորը բոլորի կանայք ու ամուսիններն են, երեխաներն ընդհանուր են: Պլատոնի իդեալական պետությունում ամուսնությունները կատարվում են տիրակալների կամքով և նախաձեռնությամբ: Նրանք են նախապես ընտրում զույգերին՝ բոլորից թաքուն միավորելով լավին լավի հետ, վատին՝ վատի:

Ահա այսպիսին է, համառոտ և ընդհանուր գծերով, Պլատոնի իդեալական պետությունը: Դրանում գործում է պետության կազմակերպման և գործունեության սկզբունքներին համապատասխանող դրական իրավունքի համակարգ, որը հանգամանորեն կարգավորում է հասարակական և անձնական կյանքը: Ընդ որում, օրենքները կարգավորում են մարդու ոչ միայն արտաքին գործողությունները, այլև հոգևոր աշխարհը: Պլատոնի կարծիքով, մարդիկ թույլ են, կրքերով բռնված, բարոյագուրկ, թեթևամիտ: Այդ պատճառով էլ մարդկանց այդ բացասական հատկանիշները պետք է արմատախիլ անել իդեալական օրենսդրության միջոցով: Օրենքը համարվում է բացարձակ բանականություն, որը չափակշռում է մարդկանց հաճույքն ու տառապանքը, հույսը և վախը: Պլատոնը գտնում է, որ ամեն մարդ իր ներսում ունի երկու հակադիր, ոչ բանական խորհրդատու՝ հաճույքն ու տառապանքը, որոնց միանում են հույսն ու վախը: Այդ ամենից վեր կանգնած է բանականությունը, որը որոշում է, թե դրանցից որն է լավ, որն է վատ: Հենց բանականությունը, վերածվելով պետության կողմից սահմանված կարգի, ստանում է օրենքի անվանում²:

Իդեալական պետության դրական իրավունքի համակարգով մանրակրկիտ կարգավորվում են ամուսնության, օրվա ընթացքում աշխատանքի և հանգստի, գիշերային հանգստի և բազմաթիվ այլ կենսական դրսևորումներ: Ոչ ոք՝ կին թե տղամարդ, ռազմերթի ժամանակ ոչ մի վայրկյան չի կարող մնալ առանց անմիջական ղեկավարի հսկողության: Բոլորը նույնիսկ ամենաչնչին հարցերում պետք է կատարեն նրա ցուցումները³: Դրական իրավունքի այդ համակարգում մանրակրկիտ կարգավորվում են պետության կազմակերպման, պաշտոնների, քաղաքացիների դաստիարակության և ապրելակերպի հետ կապված հարցերը,

² Платон, Сочинения, т. 3, ч. 2, М., 1972, с. 108.

³ Նույն տեղում, էջ 444:

քաղաքացիական հարաբերությունները, ինչպես նաև օրենքների պաշտպանության խրնդիրները:

Իդեալական պետության դրական իրավունքի համակարգն աչքի է ընկնում առանձնահատուկ դաժանությամբ: Օրենքների չնչին իսկ խախտման դեպքում սահմանված են ծանրագույն պատիժներ, ընդհուպ մինչև մահապատիժ, ընդ որում՝ պատիժ է նախատեսվում ոչ միայն օրենքի կոնկրետ ոտնահարման, այլև սոսկ դիտավորության, ինչպես նաև մտքերի և համոզմունքների համար: Պետական դավադրության, ծնողների և աստվածների դեմ ուղղված հանցագործությունների, փախստականին թաքցնելու և բազմաթիվ այլ արարքների համար նախատեսվում է մահապատիժ: Տարբեր արարքների համար նախատեսված են նաև ցմահ բանտարկությունը և քարկոծումը: Սակայն մեր տեսակետից դաժան, անմարդկային, բռնատիրական պետության և դրա դրական իրավունքի հիմքում նույնպես ընկած է արդարության սկզբունքը, որը, Պլատոնի կարծիքով, կատարյալ պետության նախապայմանն ու հիմնական սկզբունքն է: Արդարություն է այստեղ համարվում այն, որ պետության ամեն մի քաղաքացի պետք է զբաղվի միայն իր գործով և հասարակության մեջ գրավի իր զբաղեցրած տեղին համապատասխան դիրք: Պլատոնը հիմնավորում է, որ պետության հիմնադրումն իրականացվում է հանուն ամբողջի, մարդկանց հանրության: Հենց այդ ամբողջն էլ համարվում է արդարություն կամ դրա որևէ տարատեսակը: Ամեն մի առանձին մարդ պետք է զբաղվի պետությանն անհրաժեշտ միայն մեկ գործով և հենց այն գործով, որին նա առավել ընդունակ է՝ իր բնական հակումներին համապատասխան⁴:

Իսկ եթե իր բնական հակումներով արհեստավորը կամ գործարարը հարստության, բազմաթիվ կապերի, ուժի և այլնի պատճառով հպարտանա և փորձի անցնել ռազմիկների դաս, եթե ռազմիկներից մեկն աշխատի ներթափանցել տիրակալների դաս, կամ երբ միևնույն մարդը փորձի միաժամանակ երկու գործով զբաղվել, ապա այդպիսի փորձերը կհանգեցնեն պետության կործանմանը⁵:

Բաց հասարակության ջատագովներից մեկը՝ Կ. Պոպերը, խստագույնս քննադատում է Պլատոնի իդեալական պետությունը՝ գտնելով, որ նրա ծրագիրը զուտ բռնատիրական է, և նույնիսկ այնպիսի բարոյական գաղափարներ, ինչպիսիք են արդարությունը, բարին, գեղեցիկն ու ճշմարիտը, Պլատոնին տանում են դեպի բռնատիրություն: Այն, որ Պլատոնի իդեալական պետությունն ու օրենսդրությունը բռնատիրական են, կասկածից վեր է: Այդ գաղափարները քննադատելի են և պետք է քննադատվեն: Սակայն Կ. Պոպերն իր քննադատությունը հիմնավորում է Պլատոնի արդարության գաղափարների քննադատությամբ՝ հիմք ընդունելով արդարության սեփական պատկերացումները: Իսկ Կ. Պոպերի արդարության պատկերացումները հանգում են հետևյալին: Նա նշում է. «...մեր մեծ մասը, մանավանդ՝ նրանք, որոնց ընդհանուր աշխարհայացքը մարդավարական է, «արդարություն» ասելով՝ հետևյալ բանը նկատի ունեն (a) քաղաքացիության բեռի հավասար բաշխումը, այսինքն՝ հասարակական կյանքում անհրաժեշտ ազա-

⁴ Платон, Сочинения, т. 3, ч. 1, М., 1971, с. 224.

⁵ Նույն տեղում, էջ 228:

տության սահմանափակումները, (b) քաղաքացիների հավասարությունն օրենքի առաջ, իհարկե՝ այն պայմանով, որ (c) օրենքները խտրություն չդնեն ո՛չ առանձին քաղաքացիների, ո՛չ էլ՝ խմբերի և դասակարգերի միջև, (d) դատարանների անկախակալությունն ու անաչառությունը, (e) արտոնությունների (ու ոչ միայն բեռի) հավասար բաժին, որ պետությունը ի վիճակի է առաջարկելու իր քաղաքացիներին»⁶։ Սակայն մեթոդաբանական առումով խիստ վիճելի է գաղափարախոսական բնույթ ունեցող արժեքների որոշակի համակարգի տեսանկյունից արժեքների մեկ այլ համակարգի քննադատությունը։ Տվյալ դեպքում Կ. Պոպերն արդարության իր ըմբռնումը հակադրում է նույն արդարության պլատոնյան ըմբռնմանը։ Բայց կան նաև արդարության այլ ըմբռնումներ, որոնք հակասում են ինչպես Կ. Պոպերի, այնպես էլ Պլատոնի պատկերացումներին։ Եթե նկատի ունենանք, որ արդարության յուրաքանչյուր պատկերացման հիմքում ընկած է որոշակի գաղափարախոսություն, ապա մեկին կամ մյուսին առավելություն տալը ունի հարաբերական բնույթ։

Այսպիսով, նույնիսկ բռնատիրական, դաժան, անմարդկային թվացող այնպիսի դրական իրավունքի համակարգը, ինչպիսին Պլատոնի՝ իդեալական պետության մեջ հաստատված իրավական համակարգն է, նույնպես հիմնված է արդարության սկզբունքի վրա և դրա յուրովի մարմնացումն է։ Հարց է ծագում՝ հնարավոր չէ՞ արդյոք պատկերացնել դրական իրավունքի այնպիսի համակարգ, որը հիմնված լինի ոչ թե արդարության, այլ մեկ ուրիշ սկզբունքի, ասենք՝ ուժի, օգտակարության, սիրո կամ կարեկցանքի վրա։ Իհարկե, կարելի է պատկերացնել մարդկային հարաբերությունների կարգավորման ուժի վրա հիմնված համակարգ, սակայն ուժն իրավունք չի ծնում, այլ անիրավություն։ Ուժի սկզբունքի վրա հիմնված՝ մարդկային հարաբերությունների կարգավորման համակարգը ոչ թե դրական իրավունքի, այլ դրական կամայականության համակարգ կլինի։

Կարելի է պատկերացնել դրական իրավունքի համակարգ, որը հիմնված է օգտակարության վրա։ Տվյալ դեպքում պետք է ճշտել միայն, թե ինչպիսի օգտակարության մասին է խոսքը՝ անհատի⁶, հասարակության⁶, թե պետության շահերը գերադասող օգտակարության։ Այդ տեսակետից արդարացի կհամարվի այն ամենը, ինչ օգտակար է և համապատասխանում է անհատի, հասարակության կամ պետության շահերին։ Այսինքն, օգտակարությունը, որպես սկզբունք, կարող է վերածվել արդարության տարբեր դրսևորումների։ Ինչ վերաբերում է սիրուն և կարեկցանքին, ապա այդ սկզբունքների վրա հիմնված համակարգը ոչ թե իրավական, այլ բարոյական համակարգ կլինի, իսկ իրավական և բարոյական համակարգերը սկզբունքային տարբերություններ ունեն։ Այսպիսով, արդարությունը իրավունքի պարտադիր, նրա էությունը բնութագրող հատկանիշներից է։

Դրական իրավունքի հետագա զանազանակերպման ընթացքում տեսնում ենք, որ իրավատիրությունը և պարտատիրությունը վերացական հասկացություններ չեն։ Իրավատիրությունը ենթադրում է իրավատիրոջ, իսկ պարտատիրությունը՝

⁶ Պոպեր Կ., Բաց հասարակությունն ու նրա թշնամիները, Պլատոնի կախարդանքը, Ե., 2001, էջ 94։

պարտատիրոջ առկայությունը: Այսինքն՝ դրական իրավունքն անհնար է պատկերացնել առանց սուբյեկտների և դրանց փոխազդեցության: Իրավատիրությունը, ըստ էության, սուբյեկտի որոշակի հավակնություն է արտահայտում, բայց ոչ թե հավակնություն ընդհանրապես, այլ արդարացի և արդարացված հավակնություն, որը ճանաչվում է ինչպես պարտատիրոջ, այնպես էլ ուրիշների կողմից: Փաստորեն, դրական իրավունքն անհնարին է պատկերացնել նաև առանց արդարացված և այդպիսին ճանաչված հավակնության: Այսինքն՝ արդարացի ճանաչված հավակնությունը, որպես իրավատիրության յուրահատուկ դրսևորում, նույնպես իրավունքի պարտադիր հատկանիշներից է:

Շարունակելով դրական իրավունքի հետագա զանազանակերպումը՝ տեսնում ենք, որ իրավատիրությունը և համապատասխան հավակնությունն անպայման կապված են որոշակի բարիքների հետ՝ կյանք, առողջություն, գույք, իշխանություն, կարգ, խաղաղություն, անվտանգություն և այլն: Սրանք այն բարիքներն են, որոնց ուղղված են արդարացված և ճանաչված հավակնությունները: Եթե չի կարող դրական իրավունքի համակարգ գոյություն ունենալ առանց հավակնությունների, ապա չի կարող այդպիսին լինել նաև առանց որոշակի բարիքների, որոնք ձեռք բերելու, տիրապետելու, տնօրինելու կամ դրանց որևէ կերպ հաղորդակից լինելու հնարավորություն է տալիս իրավունքը: Այսինքն՝ արժեքայնությունը նույնպես իրավունքի պարտադիր և նրա էությունը բնութագրող հատկանիշ է:

Ինչպես տեսնում ենք, իրավունքի էությունը բնութագրող այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են հավակնությունը, արժեքայնությունը, պայմանավորված են իրավունքի այլ պարտադիր հատկանիշներով և բխում են դրանց առկայության փաստից: Իսկ արդարությունը, իրավատիրությունը և պարտատիրությունը, ինչպես նաև իրավունքի սուբյեկտների առկայությունն ինքնուրույն են և որևէ այլ հատկանիշով պայմանավորված չեն: Այստեղից էլ կարելի է հետևություն անել, որ իրավունքի էությունը բնութագրող պարտադիր հատկանիշները ստորաբաժանվում են երկու խմբի՝ առաջնայինի և ածանցյալի: Հարկ է նկատի ունենալ, որ խոսքը տրամաբանական և ոչ թե բովանդակային առաջնայնության մասին է:

Այս տեսակետից դրական իրավունքի հետագա զանազանակերպման ընթացքում կարելի է հայտնաբերել ևս երկու ածանցյալ, բայց չափազանց կարևոր, իրավունքի էությունը բնութագրող հատկանիշ: Դրանք ազատությունն ու հավասարությունն են: Ազատությունը կապված է իրավունքի՝ սուբյեկտների առկայության և դրանց փոխազդեցության, իսկ հավասարությունը՝ արդարության հետ: Եթե սուբյեկտը գրկված է ազատությունից, ապա չի կարող ազատորեն ճանաչել հավակնությունները, նաև՝ իրավունքի սուբյեկտ լինել: Իսկ հավասարությունը ոչ թե պարզապես ածանցված է արդարությունից, այլ դրա բնորոշ կողմերից է:

Ինչ վերաբերում է դրական իրավունքի այն հատկանիշներին, որոնք կապված են պետությանը, այդպիսիք առկա են, օրինակ, Հայաստանի դրական իրավունքի համակարգում: Հայաստանի դրական իրավունքի համակարգը ձևավորվել է պետության կողմից, բացառությամբ, թերևս, Մահմանադրության, և ապահովվում

է պետական հարկադրանքի միջոցներով: Բայց հնարավոր է պատկերացնել իրավունքի այնպիսի համակարգ, որը պետության կողմից չի ձևավորված և չի ապահովվում դրա հարկադրանքի միջոցներով: Դրական իրավունքի նման համակարգեր ոչ միայն կարելի է պատկերացնել, այլև այդպիսիք գոյություն ունեն և ունեցել են: Բավական է մատնանշել, օրինակ, եկեղեցական իրավունքը: Այդ առումով, պետության հետ կապված հատկանիշները՝ պետության կողմից սահմանված լինելը, պետության կամքն արտահայտելը, պետական հարկադրանքի և ընդհանրապես հարկադրանքի միջոցով իրավունքի ապահովումը, պարտադիր և իրավունքի էությունը բնութագրող հատկանիշներ չեն:

Այսպիսով, դրական իրավունքի զանազանակերպման միջոցով բացահայտեցինք մի շարք հատկանիշներ, որոնք իրավունքի էությունը բնութագրող և պարտադիր են: Հաջորդ խնդիրն այդ հատկանիշներն ի մի բերելը, որոշակի հիմքերով խմբավորելը և այնպիսի ամփոփ հասկացություններով արտահայտելն է, որոնք «իրավունք» գոյաբանական կատեգորիան բացահայտող գոյաբանական հասկացություններ կլինեն, և ամբողջության մեջ բնութագրում են կեցության այն ոլորտը, որն անվանում ենք իրավունքի աշխարհ:

Իրավունքի այնպիսի պարտադիր հատկանիշներ, ինչպիսիք են սուբյեկտների առկայությունը, դրանց ազատությունը, փոխազդեցությունը, հավակնությունները և նրանց փոխադարձ ճանաչումը, ներառվում են այնպիսի գոյաբանական հասկացության մեջ, ինչպիսին ինտերսուբյեկտիվությունն է: Իրավունքի սուբյեկտները ֆենոմենոլոգիայի տեսանկյունից նաև անդրանցային սուբյեկտներ են: Հետևաբար, նրանց փոխազդեցությունը ինտերսուբյեկտիվ փոխազդեցություն է, իսկ հավակնությունների փոխադարձ ճանաչումն ինտերսուբյեկտիվ բնույթ ունի:

Իրավատիրությունը և պարտատիրությունը, որպես իրավունքի պարտադիր հատկանիշ, ներառվում են այնպիսի գոյաբանական հասկացության մեջ, ինչպիսին նորմատիվությունն է: Ճիշտ է, վերջինս առավել ընդգրկուն գոյաբանական հասկացություն է, բայց իրավունքի աշխարհում դրսևորվում է իրավատիրության և դրան համահարաբերակից պարտատիրության միջոցով:

Ինչ վերաբերում է արդարությանը և այլ արժեքներին, ապա իրավունքի այդ հատկանիշները ներառվում են այնպիսի գոյաբանական հասկացության մեջ, ինչպիսին արժեքայնությունն է:

Ուրեմն, կարող ենք եզրակացնել, որ իրավունքն ինտերսուբյեկտիվ, նորմատիվ և արժեքային երևույթ է: Այս եզրակացությունը դեռևս չի կարելի իրավունքի բնորոշում համարել, որովհետև այն ոչ թե տրամաբանական դատողությունների և հետևությունների, այլ իրավունքի մինչփորձային էության անմիջական հայեցողության արդյունք է: Այդ առումով տեղին է հիշատակել իրավունքի ֆենոմենոլոգիական տեսության ներկայացուցիչներից մեկի՝ Ա. Ռայնախի նկատառումները, որը նա հայտնել է իրավունքները և պարտականությունները բնորոշելու փորձից հրաժարվելու կապակցությամբ: Ա. Ռայնախի կարծիքով, չի կարելի բնորոշել այն, ինչը հնարավոր է միայն հայեցողությամբ տեսնել: Հենց որևէ սահմանային տարրի էության հարց է ծագում, ուղղակի հայեցողության վախը մղում է ինչ-որ արտաքին

տարրերի, որոնց նկատմամբ պահպանվում է ողջախոհ տարածություն, և ձեռնարկվում է անհաջող մի փորձ՝ օտար և չպարզաբանված տարրերի միջոցով բացատրել այն, ինչն ինքն իրեն պետք է բերվի ակնհայտության⁷։ Մակայն այս նկատառումներից չի հետևում, որ անհնար է որևէ երևույթի, այդ թվում՝ իրավունքի էյդետիկ բնորոշումը։ Նման բնորոշումը հնարավոր է, եթե պարզաբանված և ակնհայտության են բերված այն բոլոր տարրերը, որոնք կազմում են տվյալ երևույթի էությունը. դա մենք իրականացրեցինք իրավունքի պարագայում։

Իրավունքի մինչփորձային էության հայեցողությունը և «իրավունք» գոյաբանական կատեգորիան բնութագրող հասկացությունների՝ ինտերսուբյեկտիվության, նորմատիվության, արժեքայնության առանձնացումը հնարավորություն է ընձեռում բացահայտելու իրավունքի մի շարք մինչփորձային օրինաչափություններ։ Իրավունքի ինտերսուբյեկտիվությունից բխում է, որ ցանկացած իրավական երևույթ անդրանցային ազատ սուբյեկտների կողմից արդարացի հավակնությունների ճանաչում է։ Իրավունքի նորմատիվությունից բխում է, որ ցանկացած իրավական երևույթ իրավատիրական-պարտատիրական կապերի մարմնավորում է։ Իրավունքի արժեքայնությունից բխում է, որ ցանկացած իրավական երեւույթ արդարության մարմնավորում է և ուղղված է որոշակի բարիքների ձեռքբերմանը, տիրապետմանը, տնօրինմանը կամ որևէ կերպ հաղորդակից լինելուն։ Ի մի բերելով իրավունքի այս օրինաչափությունները՝ կարող ենք բացահայտել իրավունքի աշխարհի հիմնական մինչփորձային օրինաչափությունը։ Ցանկացած երևույթ կեցության իրավական ոլորտի կամ իրավունքի աշխարհի իրողություն է, եթե անդրանցային ազատ սուբյեկտների հավակնությունների ինտերսուբյեկտիվ ճանաչման շնորհիվ դրանում մարմնավորվում են իրավատիրական-պարտատիրական այնպիսի կապեր, որոնք հիմնված են արդարության վրա և ուղղված են որոշակի բարիքների ձեռքբերմանը, տիրապետմանը, տնօրինմանը կամ որևէ այլ կերպ հաղորդակից լինելուն։

Այս ձևակերպումն իրավունքի աշխարհի մինչփորձային ընդհանուր օրինաչափություն է և ոչ թե իրավունքի բնորոշում։ Մակայն այս օրինաչափությունը, ի տարբերություն մյուս՝ մասնակի օրինաչափությունների, հնարավորություն է ընձեռում ձևակերպել նաև իրավունքի էությունական բնորոշումը։ Հիմք ընդունելով իրավունքի աշխարհի՝ նշված մինչփորձային ընդհանուր օրինաչափությունը՝ կարող ենք ձևակերպել իրավունքի հետևյալ էյդետիկ բնորոշումը. իրավունքն անդրանցային ազատ սուբյեկտների հավակնությունների ինտերսուբյեկտիվ ճանաչման միջոցով հաստատված իրավատիրական-պարտատիրական կապերի ամբողջություն է, որը, մարմնավորելով արդարությունը, ուղղված է որոշակի բարիքների։

⁷ Райнах А., Собрание сочинений, М., 2001, с. 232.

АПРИОРНАЯ СУЩНОСТЬ И ЗАКОНОМЕРНОСТИ ПРАВА

СТЕПАНЯН О. М.

Резюме

Проблемы онтологии права занимают важное место в общей теории и философии права. Онтология права призвана ответить на вопросы, что такое право, чем оно отличается от бытия других сущих и как возможно право вообще?

Феноменологический подход является одним из подходов к проблеме онтологии права, согласно которому различные сферы, в том числе правовая сфера бытия, конституированы по-разному и имеют особые материальные категории.

Правовая сфера бытия включает различные конкретные явления, по отношению к которым право выступает как высший конкретный род или априорная категория, обуславливающая существование явлений правовой сферы. Априорными сущностными чертами права являются императивно-атрибутивная нормативность, направленность на различные блага, справедливость, интерсубъективность. Из априорных сущностных черт права следует, что любое явление принадлежит правовой сфере бытия или миру права, если посредством интерсубъективного признания притязаний субъектов в нем воплощены основанные на принципах справедливости императивно-атрибутивные связи, предметом которых являются материальные и духовные блага.